

ОБРАЗОВАНИЕ

Կրթության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ շուկայական տնտեսության պայմաններում

ՀՏԴ 37.015.62

Մարգարյան Հասմիկ Գ.

Մանկ. գիտ. թեկ., դոցենտ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, ՀՀ)

hasmikgs@gmail.com

Գրիգորյան Մարիանա Լ.

ուսանող

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, ՀՀ)

marianaagrigroryan@gmail.com

Հանգուցաբառեր՝ կրթության ոլորտ, կրթական ծառայությունների շուկա, ֆինանսավորման համակարգ

Социально-экономические проблемы образования в рыночной экономике

Саргсян Асмик Г.

кан. пед. наук, доцент,

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна (Ереван, РА)

hasmikgs@gmail.com

Григорян Мариана Л.

студент, Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна (Ереван, РА)

marianaagrigroryan@gmail.com

Аннотация. Сфера образования находится в центре внимания современных научных исследований и политических взглядов. Лидирующие позиции в списке развитых стран мира занимают страны, способные создать высокоэффективную систему образования, отвечающую современным требованиям, а также гибкую и способную быстро реагировать на современные изменения. Практически во всех странах, демонстрирующих стремительный экономический рост, развитие образования является одним из приоритетов государственной политики.

Ключевые слова: образование, финансовая система, рынок образовательных услуг

Socio-economic problems of education in a market economy

Sargsyan Hasmik G.

PhKhachatur Abovian Armenian State Pedagogical University (Yerevan, RA)

hasmikgs@gmail.com

Grigoryan Mariana L.

Khachatur Abovian Armenian State Pedagogical University, student (Yerevan, RA)

marianaagrigroryan@gmail.com

Abstract. The field of education is in the focus of attention of modern scientific research and political views. The leading position in the list of developed countries of the world is occupied by the countries that are able to create a highly efficient education system that meets modern requirements, as well as flexible and able to respond quickly to modern changes. In virtually all countries, which show rapid economic growth, the development of education is one of the priorities of state policy.

Keywords: education, financial system, market of education services

Կրթության ոլորտը ժամանակակից գիտական հետազոտությունների և քաղաքական դիտարկումների ուշադրության կիզակետում է գտնվում: Աշխարհի զարգացած պետությունների ցանկում մշտապես առաջատար դիրք զբաղեցրել են այն երկրները, որոնք կարողանում են ստեղծել բարձր արդյունավետություն ունեցող և արդի պահանջներին համապատասխանող, ինչպես նաև ճկուն և նորօրյա փոփո-

խություններին արագ արձագանքելու ունակ կրթական համակարգ: Գործնականորեն բոլոր երկրներում, որոնք ցուցաբերում են տնտեսական արագընթաց աճ, կրթության զարգացումը պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից է լինում:

Տեղեկատվությունը ճիշտ ընկալելու, վերլուծելու և գնահատելու համար մարդը պետք է բավարար մտավոր ունակություններ և

գիտելիքների անհրաժեշտ պաշար ունենա: Իսկ դրանք ձեռք են բերվում հենց կրթության միջոցով, և առավել բարձր պահանջներ են ներկայացնում պետությանը՝ կրթական համակարգի գործունեության կազմակերպման համար:

Չնայած ավելի քան քսանհինգ տարվա ընթացքում երկրում բազմատեսակ շուկայական վերափոխումներ են տեղի ունեցել, կրթական համակարգում բարեփոխումների տարատեսակ ծրագրեր են ներդրվել, այնուամենայնիվ Հայաստանի կրթական համակարգն այսօր դեռևս բազմազան խնդիրներ ունի լուծելու՝ կապված ինչպես կրթության բովանդակության, կրթության հավասար հնարավորության իրավունքի իրագործման ապահովման, կրթական մակարդակների միջև արդյունավետ անցումների ապահովման, կրթության որակի բարձրացման և վերահսկողության ապահովման, այնպես էլ, և որ ավելի կարևոր է կրթության կազմակերպման տնտեսական կառուցակարգերի վերափոխման հետ: Վերջինս իր մեջ ներառում է պետություն-կրթական հաստատություն փոխհարաբերությունների՝ Հայաստանի համար լավագույն մոտեցման հայտնաբերումն ու ներդրումը, կրթության ֆինանսավորման ճշգրիտ մոդելի ընտրությունը, կրթության վրա ներդրված ֆինանսական միջոցների շարժ-ընթացի և արդյունավետության վերահսկողության ապահովումը կրթության բոլոր մակարդակներում:

Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման ծրագրում առաջիկա տարիների կրթության ոլորտի զարգացման հիմնական խնդիրներ նշվում են բոլոր երեխաների որակյալ միջնակարգ և նախնական մասնագիտական կրթություն ստանալու հնարավորության ապահովումը, կրթության բոլոր մակարդակներում դաստիարակության բաղադրիչի ամրապնդումը, նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացումը, երիտասարդների՝ մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածության զգալի ապահովումը, կրթության բոլոր մակարդակներում խոցելի խմբերի հավասար մասնակցության հնարավորության ապահովումը:

Մինչև 2025 ժամանակ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը ֆինանսավորման համակարգի արդյունավետության ապահովումն է, որի շրջանակներում կրթության զարգացման ծրագրում առաջարկվում են բազմազան բարեփոխումներ: Մասնավորապես նշվում է, որ ներդրվելու է արդյունքից կախված ֆինանսավորման համակարգ, տարանջատվելու են կրթության կառավարման և ֆինանսատնտեսական կառավարման գործառնությունները, անցում է կատարվելիք ծրագրային ֆինանսավորման և ծրագրերի կառավարման մեխանիզմներին,

վերանայվելու են ուսումնական հաստատությունների կառավարման համակարգի ձևավորման սկզբունքները, ավելացվելու են բարձրագույն կրթության ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորման և մասնավոր ներդրումները (ոչ վարձավճարները), ինչպես նաև փոփոխվելու են պետական ֆինանսավորման ձևերը՝ աստիճանական անցում կատարելով կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեթոդին, ընդլայնվելու են ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորություններն ու ձևերը: Մինչդեռ, այս բոլոր առաջարկների հիմքում չկան բավարար հետազոտություններ, որևէ կերպով հստակեցված չեն ֆինանսավորման այն նոր մեխանիզմները, որոնցով պետք է առաջնորդվի մասնավորապես հանրակրթության ոլորտը, մշակված չեն ֆինանսավորման բանաձևերը: Եվ ավելին, կրթության ոլորտի բարեփոխումների այս ողջ համատեքստում փաստացիորեն պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրերում կրթության ֆինանսավորման չափը երկրի համախառն ներքին արդյունքի համեմատ տարեցտարի նվազելու է, ինչը կրթության փորձագետների գնահատմամբ բավական վտանգավոր ցուցանիշի կարող է հասցնել:

Կրթության տնտեսական կառուցակարգերի ուսումնասիրությունը մեր ժամանակաշրջանում պահպանում է իր արդիականությունը, կրթության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ քննարկումներն ու բանավեճերը տարեցտարի ոչ թե նվազում, այլ աճում են: Դրանք իրականացվում են ինչպես կառավարական, այնպես էլ գիտական շրջանակներում: Ընդ որում բարեփոխումների առաջարկողներից շատերը պահանջում են մանրակրկիտ քննադատական վերլուծություն, որը հնարավորություն կտա վերհանել առկա խնդիրները և արդյունավետ լուծումներ առաջարկել:

Քննարկման հիմնական թեմաներն են տնտեսական կառուցակարգերի այնպիսի ուղղությունների բարեփոխումները, ինչպես ուսումնական հաստատությունների ինքնավարության կարգավիճակի խնդիրները, կրթության յուրաքանչյուր մակարդակի համար ֆինանսավորման ճիշտ բանաձևի որոշումը, ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնումը: Եթե ընդհանրացնելու լինենք, ապա բարեփոխումների վերաբերյալ քննարկումները հանգում են կրթական համակարգում շուկայական հարաբերությունների արդյունավետ ներդրման և իրագործման հիմնախնդրին:

Հայաստանի կրթական համակարգի պետական ֆինանսավորման մոտեցումների փոփոխությունը և շուկայական մեթոդների չհամա-

կարգված ներդրումը կրթության ոլորտ կարող է հանգեցնել համակարգի էլ ավելի առևտրայնացման: Կրթական գործընթացի ռազմավարական նպատակները, խնդիրները, ձևերը սկսում է որոշել շուկան, ինչը կարող է դուրս մղել պետությանը ոչ միայն ռեսուրսային ապահովումից, այլ նաև նվազեցնել պետական վերահսկողությունը կրթության բովանդակային կողմերի վրա:

Շուկայական գաղափարախոսության շրջանակներում սովորողներին բացառապես որպես կրթական ծառայությունների սպառող դիտարկելը բերում է սովորողների, նրա ծնողների և կրթական հաստատությունների միջև փոխհարաբերությունների փոփոխության: Հենց այսպիսի միտում է նկատվում ներկայիս բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում, երբ հատկապես ոչ պետական բուհերում աղետալիորեն նվազում է ուսանողի ուսուցման նկատմամբ պահանջների մակարդակը: Եվ շատ հիմնավոր է անհանգստությունը կրթության մյուս մակարդակներում նույն միտման տարածման վերաբերյալ:

Մենք ենթադրում ենք, որ կրթության տնտեսական կառուցակարգերի կատարելագործումը պետք է փնտրել սկզբունքորեն այլ հարացույցային հարթակում, որն արտացոլում է կրթական համակարգի ինքնատիպությունը, ոչ թե բացառապես «առաջարկ-պահանջարկ» հարթությունը: Ամենից առաջ հարկ է հաշվի առնել, որ կրթության ծախսերն իրենց տնտեսական իմաստով ներդրում են, որոնք տանում են երկրի համընդհանուր մարդկային կապիտալի ավելացմանը: Ընդ որում պետք է շեշտադրել հենց տնտեսական կառուցակարգերի կատարելագործումը, այսինքն ժամանակակից պահանջների համապատասխանող փոփոխությունների ներմուծումը, ոչ թե կրթության ոլորտի ամբողջական վերափոխումը:

Արևմուտքում կրթական համակարգի գործունեության արդյունքները դիտարկում են որպես ապրանք, որն ունի բազմանպատակ նշանակություն՝ ներդրումային, սպառողական, սոցիալական և այլն: Որոշ գիտնականներ (Տ. Մալտուս, Ռ. Լոու, Ռ. Վայլենդ) կրթական ապրանքը չեն առանձնացնում մյուսներից: Նրանք գտնում են, որ կրթական հաստատությունների նկատմամբ կիրառելի են շուկայի բոլոր օրենքները, այդ թվում և ազատ մրցակցության սկզբունքները՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Իսկ Ջ. Միլլը ենթադրում է, որ պետությունն այս ոլորտում չի կարող հենվել միայն շուկայական հարաբերությունների վրա, քանի որ կրթական ծառայությունների սպառողները, հիմնականում կոմպետենտ չեն դրանց որակի գնահատման տեսանկյունից: Հենց կրթության ոլորտում առավել վառ են

արտահայտվում շուկայական մեխանիզմների անարդյունավետության նշանները, որոնք Դ. Միլլը սահմանել է որպես «շուկայի անգործություն» [4, էջ 28]:

Ըստ հեղինակների այլ խմբի (Ժ. Սե, Ջ. Մակկուրի, Գ. Գուիջիկ, Ա. Մարշալ և ուրիշներ), կրթական հաստատությունները շահաբեր են ոչ միայն նրանց համար, ովքեր անմիջական ներդրում են անում կրթության ստացման վրա, և տալիս են ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալապես օգտակար արդյունքներ: Նրանց կարծիքով այս պարագայում արտաքին արդյունքը պատկանում է ողջ հասարակությանը, ուստի պետությունը պետք է ֆինանսավորի կրթական համակարգը, առավել ևս որ միայն այն կարող է երաշխավորել կրթության անհրաժեշտ նվազագույն որակը: Այս տնտեսագետների մոտեցումը կրթության ոլորտում հարաբերությունների յուրահատուկ դերին արժեքավոր մեթոդաբանական գաղափարներ է պարունակում ընդհանուր միջնակարգ կրթության համակարգի, կրթական ծառայությունների տրամադրման և դրանց վճարման խնդիրների հետազոտման համար:

Տեսակետ կա, որ կրթությունը, ինչպես բազմաթիվ այլ մարդկային արժեքներ, չի կարող առևտրի օբյեկտ լինել: Լ. Միզեսը այս կապակցությամբ նշում է. «անիմաստ է գումարով գնահատել այն օբյեկտները, որոնք չեն վստահում շուկայում: Եթե օրենքով սահմանվում է մարդու մահվան մեջ մեղավորության համար փոխհատուցման գումարային արժեքը, դրանից չի հեռուում, որ մարդկային կյանքն այդ արժեքն ունի» [10, էջ 162]:

Սոցիալական ոլորտում նոր ազատական գաղափարախոսության տարածումը հանգեցրեց շատ երկրների սոցիալական ծառայությունների, այդ թվում և կրթության ոլորտներում անհատականացման և շուկայական հարաբերությունների ներդրման:

Կրթության ոլորտում շուկայական հարաբերությունների ներդրումը գիտական և մանկավարժական շրջանակներում ոչ միանշանակ հակազդում է առաջացնում: Այսպես, պրոֆեսոր Ս. Պ. Կապիցան նշում է, որ ժամանակակից տեղեկատվական հասարակությունում «տեղեկատվությունը պետք է հասանելի լինի բոլորին: Առավել ևս, եթե այդ տեղեկատվությունը լուսավորության, մշակույթի կամ գիտության ոլորտում է: Այդ տեղեկատվության անհասանելիությունը մարդու հիմնարարային իրավունքների խախտում է: Հանրային գրադարանները, թանգարանների մեծ մասն անվճար են, քանի որ սա ավելի շատ սկզբունքի հարց է, քան փողի» [7, էջ 3]: Գիտնականն ընդգծում է, որ անվճար ուսուցման խորհրդային սկզբունքը «շատ առումներով հիմա իրացվում է ողջ աշխարհում... Երբ դուք իրեր եք փոխանակում, վճարը տեղին է, սակայն երբ խոսքը

տեղեկատվության շատ մեծ հատույթի մասին է, ակնհայտ է, որ դրա հասանելիություն պետք է տրամադրել բոլորին և նույն հիմունքներով» [7, էջ 3]:

Նոբելյան մրցանակակիր, նշանավոր տնտեսագետ Դ. Տոբինը նշում է, որ շուկայական, «ամիջյան համակարգը կարող է աշխատել միայն այն պայմաններում, երբ կան սոցիալական ինստիտուտներ, որոնք եսասիրական էներգիան ուղղորդում են դեպի կառուցողական շրջանակներ: Առանց այդպիսի ինստիտուտների, որոնք երբեք կատարյալ չեն լինում և կարող են թուլացվել հանցագործությանը և կաշառակերությանը, մենք չենք կարող խուսափել Հոբսի՝ «բոլորի դեմ պատերազմից»: Իսկ դրա արդյունքները էականորեն տարբերվում են նրանցից, որոնց պետք է տանի Սմիթի «անտեսանելի ձեռքը» [13, էջ 44]:

Չուգահեռ ուրույն տեղ է զբաղեցնում որոշ հետազոտողների այնպիսի ծայրահեղ ազատական տեսակետը, ինչպես Մ. Բալարանի և Օ. Լեոնտևայի արտահայտածը. «... դպրոցը միշտ կարիքի մեջ կապրի, մինչև չսկսի վիստակել... Միայն հաղթահարելով «գիտելիքների նրագի» առասպելը, դպրոցը կկարողանա վերադառնալ շուկա՝ արդեն որպես կարևորագույն ծառայությունների անհրաժեշտ ոլորտ» [3, էջ 52]:

Շատ հետազոտողներ նշում են, որ «շուկան անգամ իր լավագույն տարբերակներում կարող է հաշվի առնել միայն ամենամերձակա, ազգի արմատական շահերի տեսանկյունից հանախ անառողջ պահանջարկը, որը բոլորովին շահավետ չէ հեռանկարային նպատակների և խնդիրների որոշման համար» [8, էջ 5]: Ընդ որում, «կադրերի պատրաստման պլանավորման և երկրին անհրաժեշտ մասնագետների քանակի հաշվարկի ժամանակ չի կարելի կողմնորոշվել ներկա օրով, հարկ է կանխատեսել, թե ինչ մասնագետների պահանջ կլինի վաղը, ի դեպ, դրա համար բուհի դասախոսներ պատրաստել նախապես», ինչը նույնպես դուրս է շուկայի հնարավորությունների սահմաններից» [4, էջ 31]:

Վ. Վ. Չեկմարյովը «Կրթության ոլորտում տնտեսական հարաբերությունների համակարգը» աշխատության մեջ դիտարկելով կրթության ոլորտը որպես տնտեսական հետազոտության օբյեկտ, կրթական ծառայությունը դիտարկում է որպես տնտեսական կատեգորիա: Այստեղ վերլուծության առարկա են դառնում տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները, որոնք առաջանում են կրթական ծառայությունների արտադրության, իրացման և սպառման ժամանակ [14]: Նույն հեղինակի «Կրթության ոլորտի տնտեսական խնդիրները» աշխատանքում հիմնավորվում է կրթական ծառայությունների ապրանքային բնույթը: Այս հիմքի վրա հետազոտողները փորձում են որոշել դրանց շուկայական գինը՝ կրթական ծառայու-

թյունների շուկայում կատարվող գործընթացները մոդելավորելով շուկայական փոխանակման «պահանջարկ-առաջարկ» երկչափ կոորդինատներով [15]:

Շատ մասնագետներ որպես կրթության համակարգի հիմնական տնտեսական մեխանիզմ դիտարկում են կրթական ծառայությունների շուկան՝ եզրակացնելով, որ կրթության համակարգի զարգացումն առաջին հերթին կախված է կրթական ծառայությունների շուկայում պահանջարկի և առաջարկի հավասարակշռվածությունից [1; 12; 16, էջ 3]: Ընդ որում, բուն «կրթական ծառայություն» հասկացությունը հեղինակների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում: Որոշ հետազոտողներ կրթական ծառայություն հասկացությամբ հասկանում են բուն կրթությունը, իսկ այդ ոլորտի տնտեսական հարաբերությունները հավասարեցվում են գնորդների և վաճառողների հարաբերություններին: Մյուսները կրթական ծառայություններ են համարում բուն կրթական գործընթացն ու դրան ուղեկցող ծառայությունները. Դասագրքերով և ուսումնական նյութերով ապահովումը, ուսումնական տարածքների և ուսուցման միջոցների պահպանումը և այլն:

Ավելի ճշգրիտ է թվում մեկ այլ տեսակետ՝ շարադրված Պ. Դրուկերի կողմից. «Կրթությունը, առողջապահությունը և կենցաղը ապրանքների և ծառայությունների, այլ կերպ ասած՝ նյութական բարիքի խոշորագույն սպառողներն են: Սակայն դրանցից որևէ մեկը չի ապահովում նյութական (այսինքն «տնտեսական») բավարարում: Այս 3 ոլորտները ենթակա չեն «ազատ շուկայի» կանոններին և առաջարկի ու պահանջարկի տնտեսական օրենքներին, չեն տարբերվում բարձր նպատակային զգայունակությամբ, իսկ դրանց «վաքքը» չի համապատասխանում տնտեսագիտական տեսություններին» [5, էջ 80]:

Ե. Ն. Ժիլցովն իր հիմնարարային «Հասարակական սեկտորի և ոչ առևտրային կազմակերպությունների տնտեսագիտություն» աշխատությունում խմբավորելով հասարակական բարիքները դրանց հատկանիշների (չափանիշների) համադրման հաշվառմամբ, դրանք ստորաբաժանում է մաքուր հասարակական բարիքի և խառը հասարակական բարիքի: Խառը հասարակական բարիքների տարատեսակներից մեկը, համաձայն նշված դասակարգման, նաև կրթական ծառայություններն են, որոնք պատկանում են սոցիալապես նշանակալի բարիքներին [6, էջ 23]: Սոցիալապես նշանակալի բարիքներն ունեն սպառման համատեղ բնույթ, բացառելիության և սպառման ծավալի և որակի բարձր մակարդակ, բարձր՝ զգալի ծավալ և երկարատև արտաքին արդյունք:

Վ. Տամբովցևը նշում է, որ «Որոշում կայացնելով սոցիալ-տնտեսական բարիքի սպառման ծավալի մասին, անհատը հաշվի է առնում իր համար դրա արժեքը, վճարելով դրա սպառման այն չափը, որը բազմապատկում է դրա անձնական օգտակարությունը: Համապատասխանաբար մյուսների համար օգտակար հետևանքները կարող են դրսևորվել անբավարար մասշտաբներով, սահմանափակված մասնավոր գնորդների և նմանատիպ ծառայությունների սպառողների որոշումներով» [11, էջեր 7-8]:

Տնտեսագիտական տեսական մտածողությունը, որը նոր տեխնոլոգիական զարգացում է նախապատրաստում, ներգործում է սոցիալ-դեմոկրատական տեսական մտածողության և հասարակական զարգացման նոր գաղափարների վրա: Դպրոցն այս համատեքստում դիտարկվում է որպես կառույց, որը նպաստում է սոցիալական կոնֆլիկտների նվազմանը: Ուսումնական գործունեության ֆինանսավորումը կոչված է բավարարել հասարակական, տեխնոլոգիական և տնտեսական պահանջարկը: Կրթության ֆինանսավորման նոր մոդելների ոլորտում ռազմավարական մտածողության զարգացման վրա մեծ ազդեցություն են ունեցել Դ. Շումպետերը, Ն. Կոնդրատևը, Ջ. Գիդդենսը, Ու. Ռոմբախը, Ի. Մայերը [2, էջեր 72-73]:

Յա. Կուզմինովը գտնում է, որ պետական քաղաքականության գլխավոր փոփոխությունը պետության սուբսիդային պատասխանատվությունից հրաժարվելն է: Ուսումնական հաստատություններին առաջարկվում է ընտրություն կատարել «պետական հաստատություն կամ ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտ լինելու միջև, որի դեպքում կտրվի սեփականություն պայմանագրային սկզբունքների վրա, սակայն տվյալ դեպքում չի կարող լինել որևէ սուբսիդային պատասխանատվություն»: Բնական է, որ ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական մեխանիզմի այսպիսի արմատական փոփոխության ինչ-որ ընդունելի հիմնավորումներ լինել չեն կարող: Իսկ ինչ վերաբերում է պետության սուբսիդային պատասխանատվությանը, ապա վերջին տասնամյակի օրինակով կարելի է ասել, որ ուսումնական հաստատություններին առաջարկվում է բյուջետային ֆինանսավորման անբավարարությունը լրացնել ձեռնարկատիրական կամ եկամուտ բերող այլ գործունեության միջոցներով: Միայն այդպիսի գործունեության բացակայության կամ միջոցների անբավարարության պարագայում դրվում է կոմունալ ծառայությունների համար բյուջեից լրացուցիչ վճարումներ անելու հարցը:

Մ. Ֆրիդմենի կարծիքով (հայտնի տնտեսագետ, նոբելյան մրցանակակիր), որն արտահայտվել է դեռևս 50-ական թվականների

վերջերին և 60-ականների սկզբներին, տարրական և մասամբ միջնակարգ դպրոցական կրթության ֆինանսավորումը պետք է իրականացվի ողջ հասարակության հաշվին, սակայն պետությունը չպետք է իր վրա վերցնի դպրոցական կրթության կազմակերպումը: Երաշխիքները նախատեսված են ինչպես ֆինանսավորման, այնպես էլ կրթության կազմակերպման խնդիրների լուծման համար: Պետական կրթական համակարգը ծնողներին դպրոցի ազատ ընտրության հնարավորություն չի տալիս և չի ապահովում դպրոցների միջև մրցակցությունը սովորողների գրավման համար. պետական կրթությունը գործում է որպես մեծ մենաշնորհ: Մ. Ֆրիդմենն առաջարկել է, որպեսզի դպրոցահասակ երեխա ունեցող բոլոր ծնողներին հատուկ սերտիֆիկատներ տրվեն, որոնցով նրանք «կվճարեին» դպրոցներին իրենց երեխաների ուսուցման համար և որոնք այնուհետև պետությունը «հետ կգնեք» դպրոցներից: Նախատեսվում էր, որ այդ երաշխիքի (սերտիֆիկատի) արժեքը պետք է հավասար լինի պետական դպրոցում երեխայի ուսուցման միջին արժեքին: Այսպիսի շուկայական համակարգը, որը ստեղծվում է երաշխիքների օգնությամբ, տեսականորեն ընդունակ է ուսուցման ավելի լավ որակ ապահովել ավելի քիչ ծախսերի միջոցով սովորողներին գրավելու համար դպրոցների միջև մրցակցության ուժեղացման հաշվին: Մ. Ֆրիդմենը երաշխիքների ներմուծման անհրաժեշտությունը հիմնավորում էր նաև անհատականացման արագացման վրա դրանց դրական ազդեցությամբ, եթե դրանց շնորհիվ ստեղծվի մասնավոր դպրոցական կրթության բավական պահանջարկ, որը խթան կդառնա կրթության ոլորտ ձեռնարկատերերի գրավման համար:

Կառավարման նկատմամբ համակարգային մոտեցման հարցերը քննարկված են շատ գիտնականների աշխատություններում՝ Ռ. Լ. Ակոֆ, Ա. Ի. Բերգ, Լ. Բերտալաֆանի, Կ. Բոդդինգ, Ու. Ռ. Էմբ և այլն:

Կրթությունը կարելի է դիտարկել որպես մարդկային գործունեության տեսակ, որն ուղղված է մշակութային փորձի յուրացմանն ու փոխանցմանը, որպես մարդու դաստիարակության և սոցիալիզացման ձև, որն ընթանում է որոշակի արժեքային կողմնորոշում ունեցող և համապատասխան մեթոդական հենքի վրա կազմակերպված կրթական միջավայրում, որպես սոցիալական ինստիտուտ, որի հիմնական գործառույթն է ուսման գործընթացում սերնդեսերունդ կուտակված ձեռքբերումների, քաղաքակրթական հենքի և հասարակության ձևավորված ինստիտուցիոնալ կառուցվածքի պահպանումն ու փոխանցումը [17]:

Սոցիալիզացիայի (անձնավորվելու) ողջ ընթացքը հանգում է նրան, որ անհատը անձ է

դառնում՝ ձեռք բերելով հասարակական պատմական փորձը, այնուհետև իր վրա է վերցնում այդ փորձը մատաղ սերնդին փոխանցելու պարտականությունը: Մարդու սոցիալականացումը (սոցիալիզացիան) հասարակական-պատմական փորձի յուրացման և օգտագործման տեսանկյունից բաժանվում է երկու շրջանի: Առաջին շրջանն ընդգրկում է մինչև երիտասարդության տարիքի վերջը, իսկ մյուս շրջանը՝ դրանից հետո ընկած ժամանակահատվածը: Երկրորդ շրջանում մարդն իր սովորածը, ձեռք բերածը ավել կամ պակաս հարստացված ձևով հաղորդում է կրտսեր սերնդին [18]:

Ինչպես նշել է ֆրանսիացի վիպասան, բանաստեղծ և քննադատ Ռեմի դե Գուրմոնը՝ «Իմանալ այն, ինչ գիտեն բոլորը, նշանակում է ոչինչ չիմանալ: Գիտելիքը սկսվում է նրանից, ինչ չգիտեն մարդիկ»: Հայտնի մտածող, ուսուցիչ, տեսական քաղաքական գործիչ ու փիլիսոփա Կոնֆուցիսն նշել է. «Սովորել առանց մտածելու՝ անիմաստ է, իսկ մտածել առանց սովորելու՝ վտանգավոր»: Նա նաև նշում էր, որ կրթությունը մարդուն տալիս է արժանապատվություն, նույնիսկ ստրուկն էլ հասկանում է հասկանում է, որ նա չի ծնվել ստրկության համար: Իսկ գերմանացի փիլիսոփա, բանաստեղծ, կոմպոզիտոր ու դասական բանասեր Ֆրիդրիխ Նիցշեն կարծում էր, որ երբ շատ ենք սովորում, ոչ միայն դեմքն է ձեռք բերում խելացի արտահայտություն, այլ նաև մարմինը: Դոսին կարծում էր, որ գիտելիքը իմաստ է ձեռք բերում միայն ճուրվելով գիտակցությանը: Գերմանացի փիլիսոփա, մանկավարժ, գրող, հասարակական ու քաղաքական գործիչ Ֆրիդրիխ Ադոլֆ Վիլիելմ Դիստերվեգը կարծում էր, որ կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես: Ջիս Ռոնը նշել է. «Պետական կրթությունը կօգնի ձեզ գոյատևել: Ինքնակրթությունը կօգնի ձեզ հաջողության հասնել»: Ռուս մեծ գրող, դրամատուրգ Անտոն Չեխովը կարծում էր, որ համալսարանը զարգացնում է բոլոր ընդունակությունները, այդ թվում նաև հիմարությունը: Մանկեն նշում էր, որ համալսարանը հիմնարկություն է նախատեսված նրա համար, որ երեխաները հասարակությունում ավելի բարձր աստիճան զբաղեցնեն, քան նրանց ծնողները:

Մենք ենթադրում ենք, որ կրթության տնտեսական կառուցակարգերի կատարելագործումը՝ շուկայական գաղափարախոսության շրջանակներում, սովորողներին որպես կրթական ծառայությունների սպառող դիտարկելը բերում է սովորողների կրթության ծախսերն իրենց տնտեսական իմաստով ներդրումային են, որոնք տանում են երկրի համընդհանուր մարդկային

կապիտալի ավելացմանը: Ընդ որում պետք է շեշտադրել հենց տնտեսական կառուցակարգերի կատարելագործումը, այսինքն ժամանակակից պահանջների համապատասխանող փոփոխությունների ներմուծումը, ոչ թե կրթության ոլորտի ամբողջական վերափոխումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Александрова Н. А.**, Экономическая эффективность производства образовательных услуг: Автореф. дис. канд. экон. наук. – Кострома 1996. – 24с.
2. **Анисовец Т. А.** Экономика образования и образовательного учреждения: учебно-методическое пособие: Отдел оперативной полиграфии НИУ ВШЭ – СПб, 2012. – 180 с.
3. **Балабан М. А., Леонтьева О.** Образование как «рыночный» интеграл личных интересов // Народное образование, 1999 №1-2, с. 48-53
4. **Вифлеемский А. Б.** Организационно-экономический механизм в общем среднем образовании России. // Дис. на соиск. уч. степени доктора экономических наук// – Москва, 2006, 253 с.
5. **Друкер П.**, Задачи менеджмента в XXI веке. – Москва, 2001. 272 с.
6. **Жильцов Е. Н.**, Экономика общественного сектора и некоммерческих организация. – Москва. изд. МГУ, 1995. – 185 с.
7. **Каница С. Н.**, Интернет изменит контуры права на интеллектуальную собственность // Интернет-Эксперт №3. Июль – 2000, ст. 3.
8. **Колесников Л. Ф., Турченко В. Н.** Стратегия образования в интересах безопасности страны // Педагогика – 1999. №5 с. 3-7
9. **Кузьминов Я.**, Образование – товар с отложенным потреблением. // Учитель, 2002. №3, с.3-8.
10. **Мизес Л.**, Человеческая деятельность: Трактат по экономической теории. /2-е испр. изд. – Челябинск: Социум, 2005, 878 с.
11. **Тамбовцев В.**, Реформы российского образования и экономическая теория. //Вопросы экономики. – 2005 №3, с. 4-19.
12. **Типенко Н. Г.**, Расчет муниципального бюджета на образование. / Справочник руководителя образовательного учреждения. – 2006 №3 с. 29-38
13. **Тобин Дж.**, Теорема о «невидимой руке» должна быть модифицирована // Российский экономический журнал, 2002. – №3. с. 42-45.
14. **Чекмарев В. В.**, Система экономических отношений в сфере образования. // Дис. докт. экон. наук // – Кострома, 1997. – 491 с.
15. **Чекмарев В. В.**, Экономические проблемы сферы образования: Монография. Часть I. – Кострома 1996. – 200с.
16. Эксперт. – 2002. № 26
17. <http://www.gov.am/files/docs/1322.pdf>
18. <http://doctors.am/hy/personality-and-psychics/socialization-and-identity>

Տճանա/Հանձնվել է՝ 14.10.2021
 Рецензирована/Գրախոսվել է՝ 25.10.2021
 Принята/Ընդունվել է՝ 04.11.2021